



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1898 ՀԱՏՈՐ ԾՁ ՄԱՅԻՍ

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

Կ Ա Մ

Կ Ե Ղ Ծ - Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ա Ս

(Շար. տես յէջ 136)

2) Ս. Գիրք: — Անանունի երկրորդ աղբիւրը Սերիոսից յետոյ՝ ես համարում եմ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը:

Նախ և առաջ մեր Հատուածում՝ մենք պատահում ենք բաւականաչափ թուով յատկանիշ բիրբէական դարձուածքների, իսկ երբեմն և ամբողջ քաղուածքների, որոնք յարմարեալ են Հայոց նահապետներին:

Այսպէս՝ Անանունի դարձուածքը (էջ 2) — “Եւ ծնաւ Արամանեակ ոչստերս և դստերս բազումս՝ յորոց անդրանիկն Ամասիա: Եւ ծնաւ Ամասիա ոչստերս և դստերս բազումս՝ յորոց անդրանիկն Գեղամ... Հարմա... Արամ, — բառացի կրկնութիւն է Երևնոց գրքի Ե գլխի՝ մի կողմից և Ա. Մնացորդաց Բ գլխի (տուն 25-27, 42 և 50) — միւս կողմից:

Անանունի դարձուածքը (էջ 5)՝ “Մնաւ և Արամայիս, և կաշաւ գերկիրն որդի նորա Ամասիա: Եւ ապա յեա նորա Գեղամ: Մնաւ Գեղամ՝ և տիրեաց որդի նորա Հարմա... մի և նոյնն է, ինչ որ Ա. Մնացորդաց գրքի գլ. Ա. 43-51.

Երևնոց գրքիցն ևս (Ժ, 9-10, ԺԱ, 5) յարասութեամբ առնուած է Անանունի հետեւեալ հատուածը (էջ 3).